

ՂԵՎՈՆՂ ՎԱՐԴԱՊԵՏԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» ԵՐԿԻ
ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

ՀՏԴ 809.198

Խաչատրյան Լիլիթ

Համազգային Արևմտյան շրջանի գրական միավորում,
բանասիրական գիտությունների թեկնածու

Լուս Անջելես, ԱՄՆ
lilitellen@yahoo.com

Հոդվածում քննվում են 8-րդ դարի պատմիչ Ղևոնդ Վարդապետի «Պատմութիւն» երկի ձևաբանական իրողությունները, ցույց են տրվում դասական հայերենի նկատմամբ դրանց ունեցած տարբերությունները՝ որպես տարժամանակյա իրողություններ, որոնց ամբողջական նկարագրությունը կարող է որոշակիորեն ուրվագծել հայերենի նախամիջին ենթաշրջանի լեզվավիճակը:

Քննության առարկա են դառնում նյութական խոսքի մասերի քերականական հատկանիշների տարժամանակյա փոփոխությունները. դիտարկվում են գոյականի համակարգում դրսևորվող թվակազմական և հոլովակազմական զուգաձևությունները, բայական համակարգում ներգործածն և կրավորածն խոնարհման խաչաձևումները, բայի խոնարհման տիպերի և լծորդությունների փոխանցումները, պարզ բայերի փոխարեն ածանցավոր կազմությունների առկայությունը, խոնարհման նոր ձևերը, դիտարկվում են նաև ածականի աստիճանակազմության և դերանվան հոլովման յուրահատկությունները: Սպասարկու խոսքի մասերի համակարգում վեր են հանվում սպասարկու բառերի (մասնավորապես՝ նախդիրների) գործառական յուրահատկությունները, հոդանիշ մասնիկների գործածության յուրահատուկ դեպքերը և այլն:

Ձուգահեռներ են անցկացվում երկի ձեռագիր տարբերակի և հրատարակված բնագրի միջև, ցույց են տրվում այն տարբերությունները, որոնք կատարվել են երկի հրատարակչի կողմից, և դրանք վերագնահատվում են լեզվի տեսության դիրքերից:

Բանալի բառեր՝ ձևաբանական համակարգ, զուգաձևություն, հնչյունափոխություն, հոլովահիմք, վերջադրական հոլովում, ներդրական հոլովում, ներգործածն խոնարհում, կրավորածն խոնարհում, սպասարկու բառեր:

Ներածություն

Ղևոնդ Վարդապետը (Ղևոնդ Պատմիչ կամ Ղևոնդ Մեծ) ապրել ու ստեղծագործել է VIII դարում, երբ Հայաստանում մոլեգնում էր արաբական աշխարհակուլ սամունը, ռազմավարական շփումների հետևանքով հայերենը ենթարկվում էր արաբերենի ազդեցությանը¹:

* Հոդվածը ներկայացվել է 15.06. 2022:

Տպագրության է երաշխավորել Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ լեզվաբանական հետազոտությունների գիտական լաբորատորիայի վարիչ, պրոֆեսոր՝ Լ. Մ. Խաչատրյանը: 20.06.2022:

Հոդվածն տպագրության է ընդունվել 12.07.2022:

¹ St' u Jeffery A., Ghevonds text of the correspondence between Omar II and Leo III, Harvard Theological

Ղևոնդը, որպես ժամանակի մտածող և հոգևորական գործիչ, ականատեսի վկայությամբ նկարագրում է ոչ միայն արաբական արշավանքները, նրանց վայրագություններն ու ասպատակությունների տխուր հետևանքները, այլև՝ հայրենասերի ոգևորությամբ փառաբանում զավթիչների դեմ ծառացած բազկի ուժն ու հայոց ազատատենչ ոգին: Նա երկի բազմաթիվ էջերում արտահայտում է իր ըմբռնումները եկեղեցու և կրոնի վերաբերյալ, բացահայտում մահմեդական կրոնի մարտնչող ու ռազմատենչ ոգին և աներեր կանգնում քրիստոնեական վարդապետության ակունքների մոտ, փառաբանում նրա բարոյականությունն ու մարդասիրական էությունը՝ միաժամանակ ձգտելով անաղարտ պահել հայերենը արաբերենի աճող ազդեցությունից:

Ղևոնդ վեր է բարձրացել ժամանակի տիրապետող եկեղեցա-դավանաբանական գրականության խնդիրների շրջանակներից՝ գրելով «Պատմութիւն» աշխատանքը, որ VIII դարի հայ հոգևոր-մշակութային և հասարակական - քաղաքական կյանքի հայելին լինելով՝ միաժամանակ խոր հետք է թողել հին հայերենի զարգացման ընթացքի վրա՝ ժամանակի լեզուն հարստացնելով նոր բառերով, փոխառություններով, լեզվական բազմազան ոճերով ու արտահայտություններով:

VIII դ. հայերենի լեզվական համակարգի գիտական նկարագրությունը կարելի է տալ՝ ելնելով այդ ժամանակաշրջանի նշանավոր դեմքեր Հովհ. Մամիկոնյանի և Ղևոնդ Վարդապետի պատմական աշխատություններից:

Հովհ. Մամիկոնյանի «Պատմութիւն Տարօնոյ» երկն ամենից շատ շաղախված է ժողովրդախոսակցական շերտի բառ ու բանով, ոճերով ու դարձվածքներով, սակայն այդ աշխատության լեզվական ատաղձի ուսումնասիրությունը չի կարող ամբողջական պատկերացում տալ VIII դարի հայերենի հնչյունական իրողությունների, բառային կազմի ու քերականական կառուցվածքի մասին: Դրան լրացնում է Ղևոնդ Վարդապետի «Պատմութիւն» («Ժամանակագրութիւն») երկը, որի լեզուն գրական նորմին ավելի մոտ է. գրված է մշակված հայերենով, որտեղ հնարավորինս պահպանված են դասական հայերենի քերականական կառուցվածքային ձևերը¹:

Ըստ այդմ, Ղևոնդ Վարդապետի երկի լեզվական համակարգի քննությամբ կարելի է գաղափար կազմել հայերենի նախամիջին ենթաշրջանի լեզվավիճակի վերաբերյալ ընդհանրապես

Բովանդակություն

Նախամիջին ենթաշրջանի հայերենի ձևաբանական համակարգը բնորոշվում է մի շարք նոր գծերով, որոնք, հին հայերենի դասական շրջանի համեմատությամբ, բավական տարածում են ստանում²:

Ղևոնդի երկի ձևաբանական համակարգի առանձնահատկությունները կարելի է քննել նյութական բովանդակություն *ունեցող խոսքի մասերի և սպասարկու բառերի շրջանակներում*:

Review, N 34 (1944).

¹ Տե՛ս Ղևոնդեայ Վարդապետի Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1887:

² Նախամիջին հայերենի բնութագրական գծերի մասին տես Էդ.Մկրտչյան, Լ.Խաչատրյան, Հայոց լեզվի պատմություն.գրային ժամանակաշրջան, Երևան, «Զանգակ» հրատ., 2016, էջ 120-130:

Ա) Նյութական բովանդակություն ունեցող խոսքի մասերի շրջանակներում կփորձենք վեր հանել գոյականի, ածականի, դերանվան և բայի համակարգերում նկատվող փոփոխություններն ու բնորոշ գծերը:

Գոյականի հոլովական զուգաձևությունները:

Հոլովական զուգաձևությունը հատուկ է դասական հայերենին: Հայերենի նախամիջին ենթաշրջանում այդ երևույթի ծավալներն ընդարձակվել են՝ պայմանավորված հոլովատիպերի միջև կատարվող փոխանցումներով:

Ղևոնդի երկում հոլովական զուգահեռ ձևերը վկայված են բնագրի գիտական հրատարակության ժամանակ՝ տողատակերում: Զուգաձևության որոշման հիմք ենք համարում Ղևոնդի մատյանի ձեռագիրը, որտեղ հանդիպող «շեղված» ձևերը հրատարակիչներն ուղղել են (Կ. Շահնագարեանց, Կ. Եգեանց): Նրանք ելնելով դասական հայերենի համակարգային ձևերից, դրանք համարել են հետամուտ տարրեր: Մինչդեռ չպետք է բացառել այդօրինակ զուգաձևությունների օրինաչափ դրսևորումները VIII դարում:

Ղևոնդի երկում հանդիպում են միևնույն բառի թեքված ձևեր՝ տարբեր հոլովիչներով, որոնք ցուցաբերում են հոլովական զուգաձևություն: Այս երևույթն առավելապես հատկանշական է հայերենի նախամիջին ենթաշրջանին: Ինչպես՝

ա // ի - Աբու-Բաքրայ // Աբու-Բաքրի (էջ 7),

ո // ի - Աշոտոյ // Աշոտի (16), խորհրդոյ // խորհրդի (123),

ու // ի - սպասուք // սպասիւք (16),

ի // ա - վտանգից // վտանգաց (89),

ու // ա - Կոստանդնու // Կոստանդնեայ (9),

ու // աճ - մահու // մահուան (16),

ու // ի - քինու // քինի (31):

Ինչպես նկատելի է, զուգահեռ հոլովատիպերից գերակշռում է ի հոլովումը, որ լեզվի պատմության ընթացքում ստացավ ընդհանրական բնույթ:

Ղևոնդի մատյանի ձեռագրում հանդիպում է ա // ո հոլովատիպային զուգաձևությունը, ինչպես՝ Ասորաց (11) - Ասորոց (12):

Մի շարք բառեր Ղևոնդի ձեռագրում և հրատարակված բնագրում հանդես են գալիս տարբեր հոլովիչներով:

Ձեռագրում

ու հոլովում
Յուստիանու
ո հոլովում
ուղտոյն
ո հոլովում
աւարով
ո հոլովում
լուսնով
ի հոլովում
Ճչիք
ե հոլովում
մեղեր

Բնագրում

ի հոլովում
Յուստիանոսի (19)
ու հոլովում
ուղտուն (89)
ա հոլովում
աւարաւ (22)
ի հոլովում
լուսնիւ (86)
ո հոլովում
Ճչովք (111)
ու հոլովում
մեղու (96)

Թաքստեայք գոյականի կանոնավոր թաքստեից ձևի փոխարեն (-ի վերջադրական հոլովում) ձեռագրում հանդիպում է ի թաքստեանցն (ներդրական հոլովում), իսկ բնագրում՝ ի թաքստեացն (104) (վերջադրական հոլովում) ձևերը:

Նմանապես, ձեռագրում հանդիպում է դիականցն (26) ձևը՝ վերջադրական հոլովման տիպով, բնագրում՝ դիականցն՝ ներդրական հոլովման բնույթով (26): Այժ բառը, որ հոլովվում է -ի հոլովիչով, հանդիպում է այժեաց ձևով (ի-ա խառը հոլովմամբ) (143):

Մատյանում հոլովական գուգաձևություն կարելի է ցույց տալ ոչ միայն ըստ հոլովիչների, այլև՝ ըստ հոլովական հիմքերի, որ պայմանավորված է հնչյունափոխական գործոնով:

Հայտնի է, որ գրաբարում բառավերջի -ի ձայնավորը ո հոլովիչից առաջ հնչյունափոխվում է լ-ի (գինի > գինւյ), երբեմն էլ այն (-ի) պարզապես ընկնում է (որդի - որոյ):

Ձեռագրում այդ երևույթը (ի > թ) բավական տարածված է:

Բնագրում այդ ձևերը տրված են կանոնավոր ձևով (ւ ձայնորդով):

Այսպիսով՝ այդ կարգի բառերը թեք հոլովներում կազմվում են տարբեր հոլովահիմքերից, ինչպես՝ յորդոցն-յորդւոցն (26), հոգով - հոգւով (84), զկենդանոյն-զկենդանւոյն (10) ջորոց - ջորւոց (128) և այլն:

Ձեռագրում վկայված է յաստուածայնւոյ (46) բառաձևը, որի կառուցվածքում ձայնորդի առկայությունը պետք է համաբանության հետևանք համարել, բնագրում այն տրված է համակարգային ձևով՝ յաստուածայնոյ (46):

Ձեռագրում Ջուղայ բառը հանդիպում է կրկնակի հոլովիչով, ինչպես՝ Ջուղայիոյ (7):

Գոյականի կազմության մեջ հանդիպում են միևնույն ածանցի հնչյունափոխված տարբերակներ, ինչպես՝ ումն-ումն (ն ձայնորդի անկումով):

Հմմտ. Բազում անգամ կամեցայ գիտել զձերոյ կարծեօք հաւատոյդ ուսումնդ (43) (ձեռագրում՝ ուսումնդ):

Հոգնակի թվի ընդհանրական մասնիկն է՝ ք, ինչպես՝ հեթանոսք, ազգք, Իսմայելացիք, Եգիպտացիք, համազգիք և այլն: Քննարկվող ժամանակաշրջանի համար բնորոշն այն է, որ հոգնակերտ ք մասնիկը հոգնակի հայցականում երբեմն պահպանվում է:

Հմմտ. Խնդրեա յինէն, և տաց քեզ զհեթանոսքն ի ժառանգութիւն, և յունողութիւն քեզ ծագս երկրի (69) (փխ. զհեթանոսսն):

- Ք ձևությամբ բաղադրված այք-եայք մասնիկներն իմաստագործառական տեսակետից հետաքրքրական իրողություն են վեր հանում: Հոգնակի թվի իմաստ արտահայտելու համար միևնույն բառը հանդիպում է թե'-այք և թե' - եայք մասնիկներով, ինչպես՝ աղախնայք - աղախնեայք (42), Միջերկրայք - Միջերկրեայք (103, 111):

Նմանապես՝ եանք// եայք. Մամիկոնեանք (170) - Մամիկոնեայք (155):

Ածականը յուրահատկություն է դրսևորում բաղադրական աստիճանի կազմության տեսակետից: Նկարագրական բաղադրականն ունի հետևյալ դրսևորումները.

ա) դրական աստիճան + քան + համեմատելի բառի հայց. հոլով՝ Հայր իմ մեծ է քան զիս, քան զմարդկութիւնն (80): Բազում քան զառաջինն (105): Նուազունք քան զթիւ թշնամեացն (148): Ժանտ եւ չարագործաւ քան զամենեսին (166):

բ) Կառույցի մեջ դրական աստիճանի փոխարեն գործածվում է - գոյն ածանցով բաղադրականը, ինչպես՝

Մի՞ արդեաւք հզարագոյն իցես դու քան զամենայն թագաւորս (38): Չսա ասեն ազնուագոյն քան զամենայն արս ազգատոհմին իւրոյ (42): Առասպելագոյն քան զամենայն ստութիւն (77): Լաւագոյն քան զառաջինսն (99):

գ) Կառույցի մեջ բաղդատական աստիճանով արտահայտված ածականը ստանում է -ս ածանցը՝ ցուցաբերելով մակբայական արժեք, ինչպէս՝ Չորս թերեւս պատուականագոյնս եւ մաքրագոյնս քան զմարդն կարծիցես (86):

դ) Կառույցի մեջ կարող են հանդես գալ դրական և բաղդատական աստիճանով արտահայտված բառեր՝

Իսկ դուք քան զնոյն ինքն զօծ թունաւոր էք եւ նենգաւորագոյն... (93):

Ինչպէս կարելի է եզրակացնել բերված օրինակներից, Ղևոնդի երկուն նկարագրական եղանակով համեմատական աստիճանի կազմութիւններում գերակշռում են կրկնակի բաղդատականով ձևերը՝ - գոյն + քան զ...¹:

Ղերանվան հոլովման համակարգում նկատվում են հետևյալ առանձնահատկությունները:

Անձնական դերանվան բացառական հոլովի զուգահեռ ձևերն այլևս չեն հանդիպում սպասարկու նշանակությամբ: Ամբողջ բնագրում հանդիպում է հետևյալ օրինակը.

Դու մեծ արարէր զողորմութիւն քո առ իս, քանզի սխալանաց իմոց ես ինձէն վկայեմ (111):

Ցուցական դերանվան կարճ և երկար ձևերի գործառական վիճակագրությունը ցույց է տալիս, որ դասական շրջանի համեմատությամբ ընդլայնվել են կարճ ձևերի գործառական սահմանները: Այսպէս, այս դերանվան կարճ և երկար ձևերը Եզնիկի և Ղևոնդի երկերում ցուցաբերում են հետևյալ պատկերը.

	Կարճ ձև	Երկար ձև	Կարճ ձև	Երկար ձև	Կարճ ձև	Երկար ձև
Եզնիկ	29	—	22	11	1	1
Ղևոնդ	39	7	31	12	8	17
	Բայի հետ		Գոյականի հետ		Նախադր. խնդիր	

Ինչպէս նկատելի է, հետդասական շրջանում դերանվան կարճ ձևերը գործառապէս ակտիվ են գոյականի և բայի հետ գործածվելիս, իսկ երկար ձևերը նախադրության խնդրի դերում են կենսունակ:

Բայի խոնարհման և կառուցվածքային յուրահատկություններ:

Քննության ենթակա բնագրում բայ խոսքի մասը հանդես է բերում յուրահատկություններ, խոնարհման տիպերի և լծորդությունների փոխանցումներ, պարզ բայերի փոխարեն ածանցավոր կազմությունների առկայություն, խոնարհման նոր ձևեր և այլն:

Այդ կարգի փոփոխությունները երևում են Ղևոնդի մատյանի ծեռագրի և հրատա-

¹ Նախամիջին հայերենի այս ձևերն առանձնապէս շատ չեն տարբերվում գրաբարյան կառուցատիպերից: Գրաբարյան ձևերի մասին տես Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան., «Լույս» հրատ, 1976, էջ 59-61:

րակված բնագրի համեմատությունից:

Այսպես՝ երկի ձեռագրում ապականել (57), վաճառել (75), մերժել (143), վառել (104), արգիլել (71) հանդես են եկել է լծորդությամբ, մինչդեռ հրատարակված մատյանում դրանք համապատասխանաբար ունեն ի (ապականիմ, վաճառիմ, մերժիմ, վառիմ) և ու (արգելում) խոնարհիչներ:

Նմանապես՝ առնիմ (64. ի լծորդություն) - առնում (ու լծ.):

Բնագրում ե // ի լծորդությամբ հանդես են գալիս զդեմ ունել (6), բնակել (44), կատարել (54) բայերը:

Որոշ բայեր զուգահեռաբար հանդես են եկել ներգործածն և կրավորածն խոնարհման տիպերով: Այսպես՝ մատյանի ձեռագրում ապրեսցէ (40), ջանացեր (64), դատեսցէ (108), գումարեսցեն (145) բայերն ունեն ներգործածն խոնարհում, իսկ հրատարակված բնագրում՝ կրավորածն՝ ապրեսցի, ջանացար, դատեսցի, գումարեսցին: Բնագրում յաջողի (7), տոչորի (33) բայերը խոնարհվել են կրավորածն, իսկ հրատարակված բնագրում դրանք ունեն ներգործածն խոնարհում՝ յաջողէ, տոչորէ և այլն: Երբեմն ներգործական խոնարհման բայն արտահայտում է կրավորական սեռի նշանակությունը: Հմմտ. Ի տորա աուրս սպան և գիշխանն Վրաց չարաչար մահուամբ (166)¹ (սպանվեց):

Հայտնի է, որ գրաբարի դասական շրջանում սահմանական եղանակի անցյալի անկատար ժամանակի եզակի թվի երրորդ դեմքում բայածևը հազվադեպ ունի նաև - իւր վերջավորություն (կոչէր - կոչիւր, տեսանէր -տեսանիւր):

Այս երևույթը Ղևոնդի երկում համատարած բնույթ է կրում:

Հմմտ. երևիւր (95), վախճանիւր (99, 124), կատարիւր (109), ընկղմիւր (110), յանդիմանիւր, կշտամբիւր (112), յաճախիւր (118, 147), վճարիւր (120), վարանիւր (122), կործանիւր (124), բորբոքիւր (125), ելանիւր, խառնիւր, յերկարածգիւր, հասանիւր (126, 146, 157), գտանիւր (130, 134), անկանիւր (131), կոչիւր (132, 161), սատակիւր (133), լինիւր (138, 147, 158, 164), գաղթիւր (139), երկիւր (144), ամբոխիւր (156), հրաժարիւր (166), կատարիւր ... ելանիւր (167) և այլն¹:

Ղևոնդի երկում հանդիպում են դեպքեր, երբ անցյալ կատարյալի բայածևը վանկային աճական չի ստանում:

Հմմտ. Կոստանդին... մենամարտեալ ի միում աւուր ընդդէմ ահաւոր գազանացն՝ սպան գառիւծն իբրև զուլս (143):

Ղևոնդի երկում որոշ բայեր հանդես են գալիս թե՛ պարզ (ածանցազուրկ) և թե՛ բաղադրյալ (ածանցավոր) ձևերով, ինչպես՝ յուսամ (98) // յուսանամ (69) տաղտկամ (67) // տաղտկանամ (4):

Մատյանում հանդիպում են բայի խոնարհման նոր կամ անսովոր ձևեր, որոնք հատուկ չեն հին հայերենի բայական համակարգին:

Այսպես, առնեմ անկանոն բայի անցյալ կատարյալի հիմքն է արար, մինչդեռ քննության ենթակա բնագրում հանդիպում է ար ձևը:

Հմմտ. Եւ ինքն Ճենթակուր... առաքէր առ Մահմետ զօրավարն, «արի (արարի՝ Լ. Խ.), ասէ, զոր յայցեցերն յինէն, գայս .ԼՌ. աղջիկս ընտրեցի պատուաւորաց քոց» (39):

¹Կրավորածն խոնարհված այս բայերը գերազանցապես արտահայտում են կրավորական սեռի իմաստ:

Բնագրում հանդիպող խեռութեամբ կէին (12) և թագստեամբ կէին (125) ձևերը խորթ են ինչպես դասական հայերենին, այնպես էլ նրան հաջորդող շրջաններին:

Կէին խոնարհված ձևը կեալ («ապրել») բայի անցյալի անկատարն է, որ գործածվել է ներկայի իմաստով: Հմմտ. Յոյժ խեռութեամբ կէին նմա, մինչև հասանէր գժտութիւն նոցա յականջս որդւոյն Մահմետի (112): Ոմանք փախստեայ անկանէին ի խորասան յաշխարհն և թագստեամբ կէին անդ ժամանակս ինչ (125):

Բ) Սպասարկու բառերի գործառական յուրահատկությունները:

Քննության ենթակա երկում որոշ սպասարկու բառեր՝ նախդիրներն ու հոդերը, դրսևորում են յուրահատուկ գծեր՝ պայմանավորված գործառական դերով:

Նախդիրները թեք հոլովներին հաղորդում են լրացուցիչ շարահյուսական հարաբերությունների իմաստներ, մինչդեռ Ղևոնդի երկում այս կամ այն հոլովը կարող է կա՛մ նախդիր չստանալ, կա՛մ էլ պահանջել կրկնակի նախդիր:

Եթե տվյալ հոլովածևը հանդես է եկել առանց նախդրի, ապա նրա արտահայտած քերականական հարաբերության նշանակությունն ամբողջ նախադասության մտքից է հասկացվում:

Ղևոնդի երկում աննախդիր գործածությամբ հանդես են գալիս սեռական, տրական, հայցական և բացառական հոլովները: Բնագրի քննությունը ցույց է տալիս, որ այդ հոլովները շարահյուսական այս կամ այն պաշտոնը կատարելու համար պետք է հանդես գային ի, ց կամ առ նախդիրներով, մինչդեռ բնագրում դրանք բացակայում են:

Ի նախդիրը բացակայում է հետևյալ կիրառություններում:

Եւ գունդ մի հատեալ ասպատակէին ընդ գաւառն Արտազի վերայ զօրաւարին Յունաց (փոխ.՝ ի վերայ)՝ (7): Ապա անգիտացեալ զօրուն Յունաց անգիտութիւն մեծ (փոխ.՝ յանգիտութիւն) (5): Եւ ի ջերմութենէ արեգակնային տապոյն և ծարաւուտ ապառաժէն (փոխ.՝ յապառաժէն)... անկան ի մէջ թշնամեացն (5): Բնակիչք աշխարհիս ծառայեցին յայնմհետէ Իսմայելացւոցն ծառայութիւն ստրկի (փոխ.՝ ի ծառայութիւն) (31): Չկարենք ժուժկալել տազնապիս (փոխ.՝ ի տազնապիս), յորում կայ երկիրս Հայոց (122): Այլ բացընկեցիկ օթագայեալ ի վայրի, յարևու ... և յանծրկի և մրրիկս՝ հողմոց (փոխ.՝ ի մրրիկս)՝ (151):

Առ նախդրի բացակայության դեպքեր:

«Յուդա. ի քէն ելցէ ինծ լինել իշխան և պետ... մինչև եկեսցեն նմա (փոխ.՝ առ նմա) հանդերձեալքն (50): Ձի ահա շրջապատեալ պահեն զմեզ չարք՝ որոց ոչ գոյ թիւ, և ժամանեցին մեզ (փոխ.՝ առ մեզ) երկունք մահու (150):

Հաճախ հանդիպում է անորոշ հայցական՝ առանց զ նախդրի, ինչպես՝ «Տէր տեղաց ի Սողոմ և ի Գոմոր հուր (փոխ.՝ գիւր)» (65): Առաքի իբրև մարդ (փոխ.՝ զմարդ) և առաքէ իբրև Աստուած (փոխ.՝ զԱստուած) (80):

Հանդիպում է զ նախդրի հետաքրքրական կիրառություն. նախդիրն անցնում է հետադաս լրացման վրա: Հմմտ.

Առաքէր ի կողմանս կողմանս աւետիս գյաղթութեան իւրոյ (փոխ.՝ գաւետիս յաղթութեան) (124):

Հայտնի է, որ հին հայերենում ցուցական դերանունների վերջադաս գործածության ժամանակ նախդիրները կրկնվում են՝ համապատասխան հոլովը ձևավորելու համար:

Ղևոնդի երկում կա՛մ դերանունը, կա՛մ նրա լրացյալը հանդես են գալիս առանց նախդրի: Հմմտ.

Վասն որոյ հարկաւորի կայսրն Լևոն գրել պատասխանի արիննակ զայս (փոխ.՝ զարիննակ զայս) (45): Իսկ Աշոտ, զի էր ի քաղաքին այնմիկ (փոխ. ի քաղաքին յայնմիկ)՝ զեկուցանէր զգալուստ թշնամեացն նախարարացն Հայոց (145):

Երբեմն այս կամ այն հոլովածն ստանում է կրկնակի նախդիր կամ էլ նույն քերականական հարաբերությունն արտահայտող նախադրություն ու նախդիր: Նախդիրներն ու նախադրությունների այսօրինակ գործածությունը խորթ չէ հայերենի դասական շրջանին, սակայն այդ երևույթի շրջանակները համեմատաբար ընդլայնվել են նախամիջին ենթաշրջանում: Կրկնադիր գործածությամբ առավելաբար հադես են գալիս ի և գ նախդիրները:

Հմմտ. ի նախդրի կրկնադիր գործածության դեպքերը.

Ի սորա յառաջնում ամի իշխանութեանն... սկսաւ զօրս գումարել ի վերայ աշխարհիս Հայոց (12): Եւ շինեաց նա տուն աղօթից ի գաւառն Արագածոտին ի յաւանն Արուճ (15): Գիտեմ զի ի յԵզրէ զերկրորդումն կամիս բամբասել (55): Այլ և ոչ զծերոց զաւրութիւն այժմիկ նորոգ կամիմք ուսանել, այլ առ ի յԱստուծոյ (46):

Ղևոնդի երկի ձեռագրում հանդիպում է կրկնադիր նախդրի հետևյալ կիրառությունը, ինչպես՝ Յորմէ փախստեայ եղեալ բազումք ի յայրս՝ ղօղեալ թագչէին (135):

Զ նախդրի կրկնադիր գործածություն:

Վասն որոյ և մեք գոհանալով զսուրբ և զահեղ անուանէդ քումնէ՝ ի ձեռս քո յանձնեսցուք զոգի զշունչս մեր (34): Զքո օրի-նադրին զահագին զստութիւնն մոռացա՞ր արդեօք (76): Ոչ ինչ արգելէր զիրաքանչիւր զայսոսիկ զանուանս ցուցանել... (83): Որպէս Մահմետ ... զանաստուած զգոհագործութիւնն առնէր (89): Սսկսաւ կշտամբել զկին դատաւորին առ ի խափանել զազգի մարդկան զփրկութիւնն (94): «Յոյց ինձ զայլ գիրս զՍովսիսի և զմարգարէիցն» (77):

Ձեռագրում հանդիպում է հետևյալ օրինակը. Առին զամրոցն և զգտեալ զարսն որ ի նմա արկին ընդ կապանօք (11):

Հանդիպում են նախդիրների՝ միմյանց փոխարինելու դեպքեր. Ինչպես՝ ի նախդիրը՝ գ-ի փոխարեն: Հմմտ.

Օտարք վայելեսցեն ի փառս նորա (փխ.՝ զփառս), այսինքն հեթանոսք (71):

Քերականական նույն հարաբերությունն արտահայտող նախադրության և նախդրի զուգադիր գործածության դեպքեր:

Մինչ + ց. Վասն այսորիկ զչափաւոր գիտութիւնն իւր առ սակաւ սակաւ յայտնէր մարդկան, մինչև ցկատարումն ժամանակացն (68): Եւ ի ժամանակացն մինչև ցմայր տեառն են ամբ .Ռ. (76). Ասաց Աստուած ցՂաւիթ. «Մինչև ցլաւիտեանս պատրաստեցից զգաւակ քո...» (74). Անցանէր ընդ կողմն Պարսից և Մարաց... և անդուստ մինչև ցԱփրիկայ (ձեռագրում մինչև յԱփրիկայ) (128):

Մինչև + ի. Առին զաւանս զամրոցս որ մինչև ի Նախճաւան քաղաք (11): «Տիրեսցէ նա ի ծովէ մինչև ի ծով և ի գետոց մինչև ի ծագս տիեզերաց» (72): Անցանէր ընդ կողմն Պարսից և Մարաց մինչև յաշխարհն Խորասան (128):

Շուրջ + գ (երկում շուրջ-ը բացառապէս գործածվում է գ-ի հետ).

Շինէր վերստին զքաղաքն Դուին... անցուցանէր շուրջ զպարսպովն պարկէնս փոսից (36): Քանզի շուրջ զքաղաքաւն բոխսն ակունք Սագառիս գետոյ... (157): Ոմանք ի

ծորն Արագեղտայ ամրացեալք՝ սփռէին շուրջ զգաւառօքն ի պէտս կերակրոց (144): Իսկ զօրքն Տաճկաց որ ի Դուին քաղաքի՝ ելեալ ասպատակէին ի տեղիս տեղիս գաւառաց որ շուրջ զինքեամբք (144):

Ղերանվանական հողերի գործառական արժեքը.

Հին հայերենում դերանվանական հողերը գործառական յուրահատկություն են ի հայտ բերում. կարող են հանդես գալ թե՛ դերանունների և թե՛ բայերի հետ¹: Հմմտ.

Իմ այդ տեղի, ուր դուդ ես բազմեալ (Բուզ., 143): Բայց զայս բան կատարեցէ՛ք վաղվադակի, զոր ասեմքս (Եղ. 10): «Այո՛, արքա՛յ քաջ, այդ այդպէս է, որպէս ասացերդ (Եղ. 84):

Ղանդի երկում այդ դերով հանդես են գալիս ս, դ, ն հողերը. բայի դիմավոր ձևերի հետ՝ ս, ն, իսկ դերանվան հետ՝ դ:

Ընդ որում, հին հայերենում հող ստացող բայերը հիմնականում ներգործական սեռի են, որոնց ստացած ս և ն հոդերն ունեն ուղիղ խնդրի քերականական իմաստ: Այդ հողերը գործածվել են համապատասխան հարաբերյալների փոխարեն (այս, այն), ինչպէս՝ այն որ ասացեր > որ ասացերն: Ուղիղ խնդրի քերականական իմաստը դրսևորվել է համապատասխան ձևի միջոցով:

Հմմտ. հետևյալ օրինակները.

Եւ որ ասացերն՝ չաղօթեցին (78): Ոչ ևս եմ մոռացեալ զոր ասացերն (86): Այլ այս է զոր ասեմս աստուածաբանել զմեր տէրն ընդդիմանաս, և մարդ սոսկ խոստովանիս (81):

Հանդիպում են դեպքեր, որտեղ հոդակիր ստորոգյալին չի նախորդում հարաբերական դերանուն: Հմմտ.

Զի որպէս ասացաքն՝ յառաջագոյն՝ այսպէս հաճեցաւ Աստուած զինքն ... ծանուցանել ազգի մարդկան (57): Որ է Քրիստոս, զորմէ և ասացերն իսկ (74)²:

Հողը դերանվանը տարբեր իմաստներ է վերագրում: Այսպէս. այն կարող է արտահայտել սաստկական իմաստ՝ «հենց, ինքը» եղանակավորող արժեքով: Հմմտ.

Որպէս դուդ ասես՝ ընդէ՞ր բնաւ խօսեցաւ ընդ նոսա (57): Այլ յաղօթելն ոչ ասէր՝ որպէս դուդ գրեցեր (78): Որպէս Դուքդ ասեք՝ .Ճ. ամ փոքր ինչ աւելի կամ պակաս (60):

Հողը կարող է փոխանվանական գործածության ցուցիչի դեր կատարել: Հմմտ.

Եւ արդարև աղարտելի է քոյդ, որ ոչ է նման ծառայիցդ Աստուծոյ (60): Արդ եթէ ի քոյումդ աւադիկ գտանին այնպիսի իրք... (61): Փոքր ինչ, բայց ոչ այդպիսի աննուէր թշնամութիւն որպէս քոյոյդ (61): Զի՞նչ զարմանք էին վատթարագոյն ևս հաւատ քան զձերդ ի մեզ լինել (61):

¹Գրաբարի հողերի ու նախադասության անդամների համաձայնության հարցում նրանց դերի մասին տե՛ս Ս. Ղազարյան, Հայոց գրական լեզվի պատմություն, հ. Ա, Երևան, 1961, էջ 505-526:

²Այստեղ *զորմէ* (որի՝ նրա մասին) հարաբերական դերանունը ն հողի հետ չի արտահայտում *այն... որ* ենթադրվող հարաբերությունը:

Եզրակացություն

Ղևոնդ Վարդապետի «Պատմություն» երկի ձևաբանական համակարգի համաժամանակյա ուսումնասիրությունը բացահայտում է լեզվի զարգացման տարժամանակյա փոփոխությունների միտումները, որոնք դասական հայերենի համեմատությամբ դրսևորվում են հետևյալ ոլորտներում.

ա) **Նյութական խոսքի մասերի համակարգում.** տարածված են գոյականի հոլովական զուգաձևությունները, որոնց մեջ գերակշռում է - ի հոլովիչը, որոշ բառերի երկի ձեռագրում և մատյանի հրատարակված տարբերակում տրված են տարբեր հոլովիչներով, զուգաձևությունները տարբերվում են ոչ միայն հոլովիչներով, այլև՝ հոլովահիմքերի կառուցատիպերով, տարբերություններ են նկատվում ածականի բաղդատական աստիճանի կազմության և արտահայտության հարցում, անձնական դերանվան բացառական հոլովի զուգահեռ ձևերն այլևս չեն հանդիպում սպասարկու նշանակությամբ: Ցուցական դերանվան կարճ և երկար ձևերի գործառական վիճակագրությունը ցույց է տալիս, որ դասական շրջանի համեմատությամբ ընդլայնվել են կարճ ձևերի գործառական հնարավորությունները: Նկատելի են բայի խոնարհման տիպերի և լծորդությունների փոխանցումներ, պարզ բայերի փոխարեն ածանցավոր կազմությունների առկայություն, խոնարհման նոր ձևեր և այլն: Որոշ բայեր զուգահեռաբար հանդես են եկել ներգործած և կրավորած խոնարհման տիպերով: Հանդիպում են բայի խոնարհման նոր կամ անսովոր ձևեր, որոնք հատուկ չեն հին հայերենի բայական համակարգին:

բ) **Սպասարկու խոսքի մասերի համակարգում.** Ղևոնդի երկում յուրահատկություն են դրսևորում նախդիրներն ու դերանվանական հոդերը: Որոշակի դեպքերում այս կամ այն հոլովը կարող է կա՛մ նախդիր չստանալ, կա՛մ էլ պահանջել կրկնակի նախդիր: Աննախդիր գործածությամբ հանդես են գալիս սեռական, տրական, հայցական և բացառական հոլովները: Երբեմն այս կամ այն հոլովածն ստանում է կրկնակի նախդիր կամ էլ նույն քերականական հարաբերությունն արտահայտող նախադրություն ու նախդիր: Հանդիպում են դեպքեր, որտեղ հոդակիր ստորոգյալին չի նախորդում հարաբերական դերանուն: Երբեմն հոդն արտահայտում է սաստկական իմաստ, երբեմն փոխանվանական գործածության ցուցիչի դեր է կատարում:

Այսպիսով՝ Ղևոնդի երկում լեզվի ձևաբանական մակարդակի և նրա միավորների կրած փոփոխությունները համակարգային տեղաշարժերի դրսևորումներ են, որոնք կարևոր չափորոշիչներ են համարվում լեզվի ձևաբանական տիպաբանության տարժամանակյա բնութագիրը որոշելու հարցում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա.Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, «Լույս» հրատ, 1976:
2. Ս. Ղազարյան, Հայոց գրական լեզվի պատմություն, հ. Ա, Երևան, ԵՊՀ հրատ., 1961:
3. Ղևոնդեայ Վարդապետի Պատմություն, Ս. Պետերբուրգ, 1887:
4. Էդ. Մկրտչյան, Լ.Խաչատրյան, Հայոց լեզվի պատմություն. գրային ժամանակաշրջան, Երևան, «Զանգակ» հրատ., 2016:

5. Խաչատրյան Լ., Թոսունյան Գ., Գրաբարի դասագիրք, Երևան, 2004, «Զանգակ-97»:
6. Jeffery A., Ghevonds text of the correspondence between Omar II and Leo III, Harvard Theological Review, N 34 (1944).

REFERENCES

1. Abrahamyan, A., Grabari d'er'nark [Course of Old Armenian, Yerevan, Luys, 1976], (in Armenian).
2. Gevond Vardapet, Patmut'yun [History, S. Petersburg, 1887], (in Armenian).
3. Ghazaryan S., Hayots' grakan lezvi patmut'yun, v.I [History of the Armenian Literary Language, v. I, Yerevan, YSU, 1961], (in Armenian).
4. Jeffery A., Ghevonds text of the correspondence between Omar II and Leo III, Harvard Theological Review, N 34 (1944).
5. Khachatryan L., Tosunyan, G. Grabari dasagirq [Textbook of Old Armenian, Yerevan, Zangak-97, 2004], (in Armenian).
6. Khachatryan L., Mkrtchyan E., Hayots' lezvi patmut'yun; grayin zhamanakashrjan [History of the Armenian language; writing period, Yerevan, Zangak-97, 2016], (in Armenian).

РЕЗЮМЕ

Морфологические реалии истории Гевонда Вардапета

Хачатрян Лилит

Литературный союз Западного региона Амазгаина,

к. филол. н.,

Лос- Анжелес, США

В статье рассматриваются морфологические реалии “Истории” Гевонда Вардапета – армянского историка VIII века, показаны диахронические отличия от классического армянского языка, полное описание которых может обрисовать языковое состояние предсреднеармянского периода языка.

Предметом исследования становятся диахронические изменения грамматических признаков материальных частей речи. Наблюдаются числообразовательные и падежные параллелизмы, проявляющиеся в системе существительного, пересечения действительного и страдательного спряжений в глагольной системе, транспозиции типов спряжения глаголов, наличие производных форм вместо простых глаголов, новые формы спряжения, особенности склонения местоимений. Рассмотрены особенности новых форм степени сравнения прилагательных.

В системе служебных слов выявляются функциональные особенности этих слов (в частности, предлогов), особые случаи употребления артикльных частиц и т.д. Проведены параллели между рукописью Гевонда и опубликованным оригиналом, показав различия, сделанные издателем произведения и переоценив их с точки зрения теории языка.

Изменения языкового уровня и его единиц, зафиксированные в произведении Гевонда, есть проявления системных сдвигов, являющихся важными критериями в определении диахронических характеристик типологии языка.

Ключевые слова: грамматический строй, чередование звуков, падежная основа, склонение, постпозитивное склонение, внутреннее склонение, действительное спряжение, страдательное спряжение, служебные слова.

SUMMARY

The Morphological Realities of the Work "History"

by Ghevond Vardapet

Khachatryan Lilit

Literary Association of the Hamazkayin Western Region,

Ph.D..In Philology.

Los Angeles, USA.

The article examines the morphological realities of the 8th century historian Ghevond Vardapet's "History", shows their differences from Classical Armenian as diachronic realities. The full description of them can outline the language condition of the pre-middle Armenian period.

The diachronic changes of the grammatical features of the material parts of speech become the subject of examination. The combinations of the composition of the number in the noun system, the intersections of the active-passive conjugation in the verb system, then the transitions of verb conjugation types, the existence of derivative forms instead of simple verbs, new forms of conjugation and the peculiarities of the degrees of adjective and pronoun declination are examined.

In the system of the parts of the modal words, the functional features of the modal words (in particular, prepositions) the specific cases of the use of articles, etc are revealed.

Draws Parallels between the "published original" and the manuscript are drawn, the differences made by the publisher of the work are shown, and which re-evaluating them from the standpoint of language theory.

Changes in the morphological level and units of language in "History" by Ghevond Vardapet are manifestations of systemic shifts, that can be considered as criteria for determining the diachronical characteristics of the morphological typology of a language.

Keywords: morphological system, parallelism, sound interchange, inflectional stem, postpositive declination, flexion, active voice conjugation, passive voice conjugation modal words.